ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից 11.05.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/61 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Ա/Ձ Հրայր Մանուկյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Ա/Ձ Հրայր Մանուկյանը (այսուհետ նաև՝ Մասնակից) 11.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցել են Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը,

Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին, բողոքաբերը՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանը և այլ մասնակիցներ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07 ապրիլի 2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի թիվ 3 արձանագրության 3.2 կետով կայացրած որոշմամբ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկի հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող, իսկ նույն արձանագրության 4.1 կետով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին մի շարք չափաբաժիններով ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05 մայիսի 2018թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշմամբ մի շարք չափաբաժինների մասով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին ճանաչվել են հաղթող մասնակիցներ և որոշում է կայացվել վերջիններիս հետ սահմանված ժամկետում կնքել պայմանագրեր:

07.05.2018թ. gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-

րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 5-րդ բաժնի 5.2.-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և

ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հրավերի թիվ 6 հավելվածով սահմանվել է գնային առաջարկի օրինակելի ձևը, որի 4-րդ սյունակը նախատեսված է ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը լրացնելու համար:

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22»ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու համար Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկի կողմից ներկայացված գնային առաջարկները, Մասնակցի համար պարզ է դառնում, որ այնտեղ չեն լրացվել գնային առաջարկի 4-րդ սյունակը (այստեղ պետք է նշվեր ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը), որը մասնակիցը պարտավոր է ներկայացնել, եթե հանդիսանում է ավելացված արժեքի հարկ վճարող:

Մինչդեռ www.taxservice.am պաշտոնական կայքում հրապարակված տեղեկության համաձայն՝ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը (ԱԱՀ վճարողի հաշվառման համար՝ 45149613/1) և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին (ԱԱՀ վճարողի հաշվառման համար՝ 52160025/1) հանդիսանում են ԱԱՀ վճարողներ:

Այսպիսով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով հստակ սահմանվել է, որ եթե մասնակիցը ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում: Սակայն Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին, հանդիսանալով ԱԱՀ վճարողներ, չեն լրացրել գնային առաջարկի համապատասխան սյունակը, ինչի արդյունքում վերջիններիս ներկայացրած գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Բողոքաբերը խնդրել է բողոքը քննելիս նկատի ունենալ, որ նույն փաստական հանգամանքներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 17.04.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/49 որոշմամբ բավարարել է ներկայացրած բողոքը և արձանագրել, որ եթե www.taxservice.am պաշտոնական կայքում հրապարակված տեղեկության համաձայն՝ մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող և չի լրացնում գնային առաջարկի 4-րդ սյունակը (ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշված չէ), ապա նման գնային առաջարկը և համապատասխանաբար հայտը ենթակա է մերժման՝ հրավերի պահանջներին չհամաատասխանելու և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին հակասելու հիմքով:

Ա/Ձ Հրայր Մանուկյանի կարծիքով, Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկի գնային առաջարկները ենթակա էին մերժման, սակայն վերջիններիս հայտերը հրավերին համապատասխան գնահատելու դեպքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետը և հրավերի 5.2 կետը:

Ա/Ձ Հրայր Մանուկյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանին և Սերգե Սերգեյան Միասնիկի Ա/Ձ-ին մի շարք չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշումը:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշմամբ մի շարք չափաբաժինների մասով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանին և Սերգե Սերգեյան Միասնիկի Ա/Ձ-ին հաղթող մասնակիցների ճանաչելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Սերգե Սերգեյան Միասնիկի Ա/Ձ-ի հայտերը:

Ա/Ձ Հրայր Մանուկյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 18.05.2018թ. թիվ ԴՎԱ/1786 գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների՝ մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են եղել արժեք ընդհանրական բաղադրիչով, որի վերաբերյալ ըստ հրավերով սահմանված պահանջների՝ արժեքի բաղադրիչների հաշվարկ, բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվել, ուստի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային միջոցների ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ

մասնակիցների 07.04.2018թ. և 06.04.2018թ. հայտեր են ներկայացրել համապատասխանաբար Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյան Միասնիկին (այսուհետև Ա/Ձ Սերգե Սերգեյան):

2. Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյանը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակը չեն լրացրել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից թվով 22 չափաբաժինների մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը համապատասխան չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 16.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/8797-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը 07.04.2018թ. և Ա/Ձ Սերգե Սերգեյանը 06.04.2018թ. դրությամբ հանդիսացել են արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, թե ոչ:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 08.06.2018թ. թիվ 6-1/31281-18 գրությամբ հայտնել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում առկա տվյալների Ա/Ձ Սերգե Սերգեյանը և Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը 01.01.2018թ.-ից սկսած հանդիսանում են ԱԱՀ վճարողներ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Հրայր Մանուկյանի 11.05.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության

18.05.2018թ. թիվ ԴՎԱ/1786 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 08.06.2018թ. թիվ 6-1/31281-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային միջոցների ձեռքբերման համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 5-ով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22»* ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____
-ն առաջարկում է մասնակցի անվանումը

*պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 07.04.2018թ. և 06.04.2018թ. հայտեր են ներկայացրել համապատասխանաբար Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյանը: Վերջիններիս կողմից հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակը լրացված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից թվով 22 չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը համապատասխան չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 16.05.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/8797-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը 07.04.2018թ. և Ա/Ձ Սերգե Սերգեյանը 06.04.2018թ. դրությամբ հանդիսացել են արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, թե ոչ:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 08.06.2018թ. թիվ 6-1/31281-18 գրությամբ հայտնել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում առկա տվյալների Ա/Ձ Սերգե Սերգեյանը և Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը 01.01.2018թ.-ից սկսած հանդիսանում են ԱԱՀ վճարողներ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***եթե մասնակիցը փվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին փողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:***

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի հավելված 5 գնային առաջարկով սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, <u>ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:</u>

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մինչդեռ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանը և Ա/Ձ Սերգե Սերգեյանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 08.06.2018թ. թիվ 6-1/31281-18 գրության համաձայն 01.01.2018 թվականից հանդիսանալով ավելացված արժեքի հարկ վճարող, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 5 հավելված գնային առաջարկում չեն լրացրել ավելացված արժեքի հարկի գումարը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Հրայր Մանուկյանի 11.05.2018թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, քանի որ Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Ա/Ձ Սերգե Սերգեյանի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից 11.05.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

- պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 07.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանին Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը.

- պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանին Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

- պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Սերգե Սերգեյան Միասնիկի Ա/Ձ-ի հայտերը՝ գնային առաջարկի մասով գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**